ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ - 3

ք. Երևան «29» ապրիլի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելու հետևանքով պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուին ներկայացված՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված զեկուցագրի (այսուհետ՝ Զեկուցագիր) հիման վրա: Զեկուցագիրը ներկայացվում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածով սահմանված տեղեկանքի ներկայացումից հետո 20 օրվա ընթացքում: Զեկուցագիրը կազմվում է տվյալ ստորաբաժանման կողմից տրված՝ մատուցված ծառայությունների ծավալի (թարգմանված՝ էջերի, նիշերի, թարգմանության՝ ժամերի, բոպեների պարտադիր նշումով) վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:

Զեկուցագրում նշվում են ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում), ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը, իրավասու մարմնի անվանումն ու այն վարույթի անվանումը, որում անձը ներգրավվել է ծառայությունների մատուցման նպատակով:

Զեկուցագրին կցվում են ստորաբաժանման կողմից տրված տեղեկանքը, թարգմանչի, սուրդոթարգմանչի, տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի և վարույթի մասնակիցների փոխադարձ համաձայնությունը՝ համաձայնագիրը, որը ներկայացվում է Կատարողի կողմից համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ Ծառայության մատուցման ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Համապատասխան ստորաբաժանման ղեկավարը Զեկուցագիրը կազմում և ստորագրում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Զեկուցագիրը ստորագրվում է նաև Կատարողի կողմից: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Զեկուցագիրը չի ստորագրվում և այդ մասին անհապաղ տեղյակ է պահվում Պատվիրատուն, ով՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Եթե պայմանագրի 3.1 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո համապատասխան ստորաբաժանման ղեկավարը չի կազմում սույն կետի պահանջներին համապատասխան Զեկուցագիրը, չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա ծառայությունը համարվում է ընդունված և 3.1 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը համապատասխան ստորաբաժանման ղեկավարը Զեկուցագիրը Կատարողին է տրամադրում՝ Պատվիրատուին ներկայացնելու համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը հաշվարկվում է տեխնիկական բնութագրով սահմանված միավորի գնով, ներառյալ ԱԱՀ: Ծառայության առավելագույն գինը կազմում է 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (միավոր գինը ըստ պայմանագրին կից 1-ին հավելվածի գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն վճարում է իրեն մատուցած փաստացի Ծառայության դիմաց անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողի և Կատարողի հաստատած զեկուցագրի հիման վրա (եթե զեկուցագիրը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Պայմանագիրը գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	**ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ**
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	**Հասցե՝ ք.Երևան, Դ. Անհաղթի 19/1, բն.70**
ՀՎՀՀ 02647057	**Հ/Հ 163288640101**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Հայէկոնոմբանկ ԲԲԸ**
Հ/Հ 900011054013	**ՀՎՀՀ 01006813**
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար	**էլ. փոստ: artconsulting@mail.ru**
Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ	**Ա. Խաչատրյան**
/ստորագրություն/	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված 1
«29» ապրիլի 2021թ. կնքված
թիվ 3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափա բաժնի համար	Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր	Գրավոր /վարձատրության չափ (1 թարգմանչական էջ)	Բանավոր /վարձատրության չափ (1 ժամ)
1	թարգմանություն՝ հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն	3000	7000
2	թարգմանություն՝ հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն	4000	8500
3	թարգմանություն՝ հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն	4000	14000
4	թարգմանություն՝ հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն	4000	14000
5	թարգմանություն՝ հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն	4000	14000
6	թարգմանություն՝ հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն	2500	7000
7	թարգմանություն՝ հայերենից հունարեն, հունարենից հայերեն	8000	13500
8	թարգմանություն՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն	3000	7000
9	թարգմանություն՝ հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն	5500	14500
10	թարգմանություն՝ հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն	7500	9000
11	թարգմանություն՝ հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն	5500	14500
12	թարգմանություն՝ հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն	3000	8000
13	թարգմանություն՝ հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն	7500	15000
14	թարգմանություն՝ հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն	7500	18000
15	թարգմանություն՝ հայերենից չինարեն, չինարենից հայերեն	15000	15000
16	թարգմանություն՝ հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն	14000	18000
17	թարգմանություն՝ հայերենից հոլանդերեն, հոլանդերենից հայերեն	15000	20000
18	թարգմանություն՝ հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն	6500	10000
19	թարգմանություն՝ հայերենից ճապոներեն, ճապոներենից հայերեն	15000	20000
20	թարգմանություն՝ հայերենից ռումիներեն, ռումիներենից հայերեն	19000	22000
21	թարգմանություն՝ հայերենից սերբերեն, սերբերենից հայերեն	18000	20000
22	թարգմանություն՝ հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն	19000	23000
23	թարգմանություն՝ սլովեներենից հայերեն, հայերենից սլովեներեն	18000	20000
24	թարգմանություն՝ հայերենից ուկրաիներեն, ուկրաիներենից հայերեն	5000	10000

25	թարգմանություն՝ հայերենից փանջաբի, փանջաբիից հայերեն	14500	18000
26	թարգմանություն՝ հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	9500	11000
27	թարգմանություն՝ հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն	11500	14000
28	թարգմանություն՝ հայերենից լիտվերեն, լիտվերենից հայերեն	15000	18000
29	թարգմանություն՝ հայերենից ուրդու, ուրդուից հայերեն	15000	15000
30	թարգմանություն՝ հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն	14500	17500
31	թարգմանություն՝ հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն	15000	18000
32	սուրդո թարգմանություն՝ խուլ ու համրերի համար	13500	13500
33	թարգմանություն՝ հայերենից եզդիերեն, եզդիերենից հայերեն	19000	22000
34	թարգմանություն՝ հայերենից պորտուգալերեն, պորտուգալերենից հայերեն	19000	22000
35	թարգմանություն՝ հայերենից կորեերեն, կորեերենից հայերեն	19000	22000
36	թարգմանություն՝ հայերենից էսպոներեն, էսպոներենից հայերեն	19000	22000
37	թարգմանություն՝ հայերենից ալբաներեն, ալբաներենից հայերեն	19000	22000
38	թարգմանություն՝ հայերենից բելառուսերեն, բելառուսերենից հայերեն	19000	22000
39	թարգմանություն՝ հայերենից հունգարերեն, հունգարերենից հայերեն	19000	22000
40	թարգմանություն՝ հայերենից ղազախերեն, ղազախերենից հայերեն	19000	22000
41	թարգմանություն՝ հայերենից խորվաթերեն, խորվաթերենից հայերեն	19000	22000
42	թարգմանություն՝ հայերենից թուրքմեներեն, թուրքմեներենից հայերեն	19000	22000
43	Թարգմանություն՝ հայերենից սույն կարգով չսահմանված լեզուներ, սույն կարգով չսահմանված լեզուներից հայերեն	19000	22000

Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը
Ծառայության մատուցումն իրականացվում է կողների միջև փաստացի ծագած հարաբերությունների պահից՝ 2021 թվականի ապրիլի 29-ից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Միջին բարդության իրավաբանական թարգմանությունը՝ Պատվիրատուի կողմից հանձնարարված պատշաճ որակի թարգմանությունն է:

Լրացուցիչ պահանջներ՝

1. Թարգմանիչների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված համարվող անձ հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին:

2. Գրավոր թարգմանության դեպքում Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը՝ տեքստը ստանալու օրվանից քննիչի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով:

3. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն առնվազն երկու օրինակից, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ նաև երեք օրինակից:

4. Թարգմանվող նյութերում կնիքի և ստորագրության առկայության դեպքում թարգմանությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

- ✓ Կնիքի առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Կնիք զինանշան> /կնիքի վրա առկա գրառումները չեն թարգմանվում/, /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի կնքված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում նույն կնիքը համապատասխան ձևով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի կնիքների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Ստորագրության առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Ստորագրություն> /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի ստորագրված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում ստորագրությունը համապատասխան լեզվով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի ստորագրությունների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Թարգմանության ներկայացված նյութերում առկա՝ մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, ֆինանսական կամ այլ հաշվարկների վերաբերյալ աղյուսակները, ինչպես նաև այն նշումները, որոնք թարգմանության արդյունքում փոփոխության չեն ենթարկվում, այսինքն՝ չեն թարգմանվում, ուստի չեն կարող հաշվարկվել որպես թարգմանված նյութի միավորներ:
- ✓ Եթե թարգմանության ներկայացված նյութերում առկա թվանշանների քանակը գերազանցում է 5 էջը, ապա դրանք թարգմանված փաստաթղթում արտացոլելու համար վճարվում է 5 էջին համարժեք չափով:

Ծանոթություն՝

1. Գրավոր թարգմանված նյութի մեկ միավորի գինը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի համար, այն պետք է բաղկացած լինի 1800 նիշից:
2. Մինչև 1800 նիշից բաղկացած թարգմանված նյութի համար թարգմանված նյութի գնի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի (1800 նիշ) համար սահմանված գին /1800 x թարգմանված նյութի նիշերի քանակ:
3. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 25 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ, Միջտողային միջակայքը՝ 1.5:
4. Բանավոր և խուլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից քննիչի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես քննչական գործողության փաստացի տևողությունը:
5. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի, եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես էջը, բայց պակասում է մեկ էջից, ապա այն հավասարեցվում է մեկ էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես էջի: Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը:
6. Թարգմանության ծառայությունները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նախապատրաստված նյութերի և քրեական գործերի կարիքների համար ձեռքբերվող թարգմանության ծառայություններ են, որոնք մատուցվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	Հասցե՝ ք.Երևան, Դ. Անհաղթի 19/1, բն.70
ՀՎՀՀ 02647057	Հ/Հ 163288640101
ՀՀ ֆն. նախարարության գործառնական փարտություն	Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 900011054013	ՀՎՀՀ 01006813
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար	էլ. փոստ: artconsulting@mail.ru
Է.Գեվորգյան	Ա. Խաչատրյան
/ստորագրություն/ Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
«29» 04 2021թ. կնքված
Թիվ 3 պայմանագրի

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատու՝ _____
Կատարող՝ _____
(Ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը)
Ստորաբաժանման անվանումը _____
Թիվ քրեական գործ (նյութ) _____
Ձեկուցագիր ներկայացնող _____
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը
			ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը	ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում),		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկանքները և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Ձեկուցագրի բաղկացուցիչ մասը:

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծանոթացա, համաձայն եմ
Կատարող՝ _____

Հավելված 3
«29» 04 2021թ. կնքված
Թիվ 3 պայմանագրի

ՏԵՂԵԿԱՆՔ

(պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին վճարվելիք գումարի չափի վերաբերյալ)

_____,
(վարույթն իրականացնող մարմնի անվանումը)

_____
(թարգմանչի Ա. Ա. Հ., կազմակերպության անվանումը), (տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի Ա. Ա. Հ.)

_____
(ծառայությունների ծավալի մանրամասն նկարագրությունը)

Ստորաբաժանման ղեկավար

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն